

MARIETA DANIELYAN

PERSPECTIVES OF ECOTOURISM DEVELOPMENT IN ARMENIA

Key words: ecotourism, eco-village, sustainable development, green lifestyle, recreational resources, use of secondary resources.

Armenia takes the first steps in the field of tourism, having all the prerequisites for the development of this sphere: convenient geographical position, unique nature, cultural traditions, attractions, active diaspora.

The emergence and development of ecotourism is conditioned by the desire to minimize the human impact on the environment. The basis for the development of ecotourism is a stable development ideology.

ԱՆԻ ԴԱՎԹՅԱՆ

*Աշխատանքի և աշխատավարձի
կազմակերպումը ծառայությունների
ոլորտում, մագիստրատուրա, 1-ին կուրս*

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. կենսաթոշակային համակարգ, կենսաթոշակային բարեփոխումներ, կենսաթոշակային տարիք, բեռնվածության գործակից, փոխհատուցման գործակից

Հոդվածում դիտարկվել են ԵՄ և ԱՊՀ երկրների կենսաթոշակային բարեփոխումների առանձնահատկությունները, կենսաթոշակային համակարգի հիմնախնդիրները, ուսումնասիրվել է բնակչության սեռատարիքային կազմը, ներկայացվել են բեռնվածության և փոխհատուցման գործակիցները ԱՊՀ երկրներում և միջին կենսաթոշակի ու միջին աշխատավարձի հարաբերակցությունը եվրոպական երկրներում, վերլուծվել են MMGPI-ը և Global AgeWatch Index-ը և այս ամենի արդյունքում կատարվել են եզրակացություններ և ներկայացվել են առաջարկություններ:

Մինչև 20-րդ դարի վերջը գրեթե բոլոր երկրներում արդյունավետորեն գործում էր կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման «մայրցամաքային» կամ «բիսմարկյան» մոդելը, սակայն բնակչության կենսաթոշակային ապահովման ոլորտում սկսեցին ի հայտ գալ բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես՝ բավական հնչեղություն ստացան կենսաթոշակային միջոցների կառավարման ու վերահսկողության հիմնախնդիրները: Ներկայումս ԱՊՀ և Եվրոպական միության երկրներում չեն դադարում քննարկումները միգրացիայի, գործազրկության, թաքնված զբաղվածության աճի, կենսաթոշակային համակարգերի զարգացման հնարավորությունների վերաբերյալ: Յուրաքանչյուր երկրում իրականացվում են կենսաթոշակային բարեփոխումներ, որոնց արդյունքում կենսաթոշակային համակարգերը վերակազմավորվում են պարամետրիկ կամ արմատական բարեփոխումների տեսքով: Հետազոտության նպատակն է իրականացնել ԱՊՀ և ԵՄ երկրների կենսաթոշակա-

յին համակարգերի համեմատական ուսումնասիրություն, դրանց կայունությունը բնութագրող ցուցանիշների վերլուծություն, բացահայտել ԱՊՀ երկրների կենսաթոշակային համակարգերում առկա հիմնախնդիրները և առաջադրել կատարելագործման հնարավոր ուղիներ:

Յուրաքանչյուր պետության սոցիալական քաղաքականության կարևորագույն նպատակներից է քաղաքացիների արժանավայել կենսաթոշակային իրավունքների ապահովումը: Եթե անձը ԵՄ անդամ մեկ երկրից տեղափոխվում է ԵՄ անդամ մեկ այլ երկիր, ապա նրա կենսաթոշակային իրավունքները պաշտպանված են: ԵՄ համակարգը հնարավորություն է ընձեռում շարժվել ողջ Եվրոպայով և չկորցնել կենսաթոշակային ապահովության իրավունքը¹:

Ինչ վերաբերում է ԱՊՀ երկրներին, ապա այստեղ իրավիճակն այլ է: ԱՊՀ երկրների համար կենսաթոշակային իրավունքի հարցերը լուծվում են երկրների միջև կնքված միջազգային պայմանագրերով²: Չնայած այս ամենին, ԱՊՀ անդամ երկրները դեռևս չունեն կենսաթոշակային ապահովման մեկ ընդհանուր պայմանագիր: Այս առումով կարևորվում է այն, որ ԵԱՏՄ անդամ երկրները 2018 թ. ստորագրելու են աշխատողների կենսաթոշակային ապահովման մասին պայմանագիր, որը կենթադրի կենսաթոշակային ոլորտում հավասար պայմանների ապահովում, և ըստ այդմ՝ կենսաթոշակների չափը չի կարող նվազեցվել, վճարումը չի կարող կասեցվել կամ դադարեցվել աշխատողի՝ այլ անդամ պետության տարածքում բնակվելու հիմքերով³: Կենսաթոշակ նշանակելիս հաշվի կառնվի անդամ պետությունների տարածքում ձեռք բերված աշխատանքային ստաժը (կենսաթոշակային ապահովման մասին պայմանագրի ուժի մեջ մտնելուց առաջ և հետո), ինչպես նաև նախկին ԽՍՀՄ տարածքում ձեռք բերված աշխատանքային ստաժը: Այնուհանդերձ, ԵԱՏՄ անդամ երկրները կենսաթոշակային իրավունքների վերաբերյալ միասնական համաձայնության չեն գալիս: Օրինակ, լուրջ հիմնախնդիր է հետևյալը. եթե աշխատունակ տարիքում գտնվող անձը մեկնել է ՌԴ աշխատելու, ապա հետագայում ինչպե՞ս կհաշվարկվի նրա կենսաթոշակը: ՌԴ-ում անհրաժեշտ է 15 տարվա ապահովագրական ստաժ՝ նվազագույն կենսաթոշակային միավորներով, որը 2018 թ. 13.8 է, սակայն նախատեսված է 2025 թ. հասցնել 30-ի: Կենսաթոշակային միավորների քանակը կախված է ապահովագրական վճարների չափից, որն ուղղվում է պարտադիր կենսաթոշակային ապահովագրության համակարգ, իսկ անդամ պետությունների քաղաքացիների համար անհրաժեշտ կենսաթոշակային միավորների բացակայությունը լուրջ խնդիր է առաջացնում: ՌԴ-ն և Բելառուսը հակված են, որ 1 տարվա աշխատանքային ստաժը անդամ պետությունների քաղաքացիների համար պետք է համարել 1 կենսաթոշակային միավոր, իսկ Հայաստանը, Ղազախստանը և Ղրղզստանը առաջարկում են, որ այն լինի 2-ից ոչ պակաս:

Յուրաքանչյուր երկրում քաղաքացիներին հետաքրքրում է կենսաթոշակային տարիքը, որը վերջին տարիներին, կախված ժողովրդագրական խնդիրներից, ունի բարձրացման միտում: ԵՄ անդամ 15 պետություններում ընդհանուր կենսաթոշակային տարիքը 65-ն է: Նոր անդամ պետություններ-

¹ <http://ec.europa.eu>

² <http://www.cis.minsk.by>

³ [http:// www.eaeunion.org](http://www.eaeunion.org)

րում կենսաթոշակային տարիքը հաջորդ տասնամյակում կհասնի նույն մակարդակին: Ընդհանուր առմամբ, տղամարդկանց կենսաթոշակային տարիքը ԵՄ երկրներում 2017 թ. կազմել է 65, իսկ կանանցը՝ 63 (տե՛ս հավելված 1): Իսկ 2050 թ. ԵՄ երկրների կենսաթոշակային տարիքը, ըստ կանխատեսումների, ներկայացված է հավելված 2-ում: Մասնավորապես, կենսաթոշակային տարիքի փոփոխությունները տեղի կունենան 2020 թ.: Ըստ հավելված 2-ի տվյալների՝ ամենաբարձր կենսաթոշակային տարիքը կլինի Դանիայում՝ 72 (կախված կյանքի միջին սպասվող տևողության բարձրացումից), իսկ ամենացածրը՝ Շվեդիայում և Նորվեգիայում:

ԱՊՀ երկրների կենսաթոշակային տարիքային շեմը 2017 թ. դրությամբ ներկայացված է հավելված 3-ում, որի տվյալներից պարզ է դառնում, որ Հայաստանում կանանց և տղամարդկանց կենսաթոշակային տարիքը 63-ն է: Իսկ ինչպես երևում է հավելված 4-ում ներկայացված աղյուսակի տվյալները, ԱՊՀ երկրները, ընդհանուր առմամբ, կենսաթոշակային տարիքը սկսել են բարձրացնել 2017-ից՝ դրանով իսկ փորձելով գոնե ժամանակավորապես լուծել կենսաթոշակային համակարգերի առջև ծառացած խնդիրները:

Համաշխարհային տնտեսական համաժողովի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «մենք շատ ավելի երկար ենք ապրում, քան նախատեսում են կենսաթոշակային համակարգերը»: Հավելված 5-ում ներկայացված է կենսաթոշակային տարիքը «խոշորագույն» կենսաթոշակային համակարգ ունեցող 6 երկրների համար, որոնցից մեծ մասում այդ տարիքը 65-ն է (բացառությամբ՝ Ճապոնիայի՝ 60): Գծապատկերում ներքևի քառանկյունը ներկայացնում է ակնկալվող վճարումների տարիների թիվը՝ օգտագործելով 1960 թ. կյանքի տևողությունը: Այն վճարումներ է ընդգրկում միջին հաշվով 5-8 տարի: Դիտարկելով 2015 թ. կյանքի տևողությունը, տեսնում ենք, որ թոշակառուները 8-11 տարով երկար են ապրում, իսկ Ճապոնիայում՝ 16 և ավելի (այսինքն, օրինակ, Ճապոնիայում ակնկալվող վճարումների տարիների թիվը 2015 թ. կազմել է $7.7+16.2=23.9$ տարի): Սա նշանակում է՝ կենսաթոշակային համակարգերը ստիպված են թոշակ վճարել 2-3 անգամ ավելի, քան նախատեսված է: Վերևի քառանկյունը ներկայացնում է կյանքի տևողության սպասվող աճը 2050 թ.:

Ընդհանուր առմամբ, կանանց կենսաթոշակը սովորաբար 30-40%-ով ավելի ցածր է, քան տղամարդկանցը: Սա կարող է պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ կանանց աշխատավարձի չափը 20-40%-ով ավելի ցածր է, քան տղամարդկանցը¹, ինչպես նաև ավելի ցածր է կանանց աշխատանքային ստաժը (պայմանավորված երեխայի խնամքով, ընտանեկան կարգավիճակով և այլն): Բայց չպետք է մոռանալ նաև, որ կանանց կյանքի միջին սպասվող տևողությունն ավելի բարձր է, քան տղամարդկանցը:


Կենսաթոշակային խնայողությունների ճեղքվածքի չափը, ըստ կանխատեսումների, ներկայացված է հավելված 6-ում, որից երևում է, որ ընդհանուր ճեղքվածքը 2015 թ. կազմել է 70 տրլն դոլար, որն ամեն տարի 5%-ով մեծացել է և 2050 թ. կկազմի 400 տրլն դոլար: Այսինքն, ամեն օր 28 մլն դոլարի դեֆիցիտ²:

¹ <http://www.ilo.org>

² <http://www.weforum.org>

Եթե ուսումնասիրենք ԱՊՀ և ԵՄ երկրների բնակչության սեռատարիքային կազմը, ապա կնկատենք, որ ԱՊՀ երկրներից Թուրքմենստանն ունի համեմատաբար երիտասարդ բնակչություն՝ 15-64 տարեկանները կազմում են ընդհանուր բնակչության 59%-ը, իսկ 0-14-ը՝ 37%-ը, այն դեպքում, երբ ԵՄ երկրներում 0-14 տարիքային կազմի բնակչության ամենաբարձր տեսակարար կշիռը նկատվել է Իռլանդիայում՝ 22%, իսկ ամենացածրը՝ Գերմանիայում՝ 13%, որտեղ և 65 տարեկանից բարձր բնակչությունն ամենաբարձր տեսակարար կշիռն է կազմում ողջ ԵՄ կազմում՝ 21% (հավելվածներ 7 և 8):

Ֆինանսական կայունության համար կարևոր ցուցանիշ է բեռնվածության գործակիցը, որը ցույց է տալիս կենսաթոշակ ստացողների և զբաղվածների թվի հարաբերակցությունը¹: ԱՊՀ երկրներում բեռնվածության գործակիցը ցույց տանք գծապատկեր 1-ի միջոցով:



Գծապատկեր 1. Բեռնվածության գործակիցը ԱՊՀ երկրներում (2012–2016 թթ.)²

ԱՊՀ երկրներում բեռնվածության գործակցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2016 թ. այն ամենաբարձրն է եղել Ուզբեկստանում՝ 4.3 (ինչպես և 2012 թ.՝ 4.2), այսինքն՝ 4.3 զբաղվածները պահում են 1 կենսաթոշակառուի, իսկ ամենացածրն Ուկրաինայում է՝ 1.4: ՀՀ-ում, 2002 թ. համեմատ, այն 2.3-ից նվազել և 2016 թ. կազմել է 1.9:

Կարևոր ցուցանիշ է համարվում նաև փոխհատուցման գործակիցը, որը միջին կենսաթոշակի և միջին աշխատավարձի հարաբերակցությունն է:³ Փոխհատուցման գործակիցը ԱՊՀ երկրներում ներկայացված է գծապատկեր 2-ի միջոցով:

Ինչպես երևում է գծապատկերից, 2000 և 2016 թթ. ԱՊՀ երկրներում առաջատարն է եղել Բելառուսը՝ 0.42 (2 տարիների ընթացքում էլ), իսկ Ուկրաինայի դեպքում, որի գործակիցը 2005 թ. ամենաբարձրն էր ԱՊՀ երկրների կազմում՝ 0.52, այն նվազել և այժմ կազմում է 0.4: Գործակիցն ամենացածրը Հայաստանում է՝ 0.22:


2016 թ. արտասահմանյան մի շարք երկրների միջին կենսաթոշակի և միջին աշխատավարձի հարաբերակցությունը ներկայացված է հավելված 9-ում, որտեղից երևում է, որ գործակիցն ամենաբարձրը կազմել է Նիդեռլանդներում (ըստ բրուտտո գործակցի, առանց հարկման)՝ 92.1%, իսկ ըստ

¹ <http://www.ssa.am>

² Կազմված է ըստ <http://www.e-cis.info> կայքէջի տվյալների:

³ <http://www.ssa.am>

նետոո գործակցի (հարկումից հետո)՝ 101.7%, ամենացածրը Միացյալ Թագավորությունում է, համապատասխանաբար՝ 33.6% և 41.2%:



Գծապատկեր 2. Փոխհարուցման գործակիցները ԱՊՀ երկրներում (2000–2016 թթ.)¹

Կենսաթոշակային համակարգերի որոշակի գծերի և բնութագրիչների հիման վրա կարող ենք ներկայացնել, թե որքանով են արդյունավետորեն բարեփոխված կենսաթոշակային համակարգերը: Ըստ Համաշխարհային բանկի «Կենսաթոշակային բարեփոխումների ուղեցույցի»՝ կենսաթոշակային համակարգերի ընդհանուր նախագծերը գնահատվում են՝ կիրառելով առաջնային և երկրորդային չափանիշներ:²

Ըստ առաջնային չափանիշների՝ տարբեր երկրների կենսաթոշակային համակարգերի գնահատումը և դասակարգումը արդեն մի քանի տարի է՝ իրականացվում են Մելբուրն Մերկեր գլոբալ կենսաթոշակային համաթվով (MMGPI), որի 2017 թ. զեկույցում համեմատությունը կատարվել է 30 երկրների միջև (աշխարհի բնակչության ավելի քան 60%-ը), և A աստիճանի կենսաթոշակային համակարգ չի ճանաչվել և ոչ մի երկիր՝ ի տարբերություն նախորդ տարվա և 2015 թ., երբ A աստիճանի էին ճանաչվել Դանիայի և Նիդեռլանդների կենսաթոշակային համակարգերը (տե՛ս հավելված 10): Յուցանիշներն ընդհանուր առմամբ բարձրացել են, որը կարող է բացատրվել 2017 թ. զեկույցում ներառված նոր երկրներով, քանի որ այդ երկրներն ընդգրկված էին բարձր մակարդակներում՝ Նորվեգիա՝ B, Կոլումբիա՝ C+, Նոր Զելանդիա՝ B:

Քանի որ MMGPI-ում ներառված են ավելի քիչ երկրներ, և բացակայում են ԱՊՀ երկրները, այդ իսկ պատճառով ուսումնասիրենք ևս մեկ ցուցանիշ՝ Global AgeWatch Index-ը:³ Ըստ 2015 թ. հրապարակված տվյալների (ուսումնասիրություններն իրականացվել են մինչև 2015 թ.)՝ որպես տարեցների համար լավագույն երկիր, 96 երկրների (շուրջ 901 միլիոն մարդ, որոնց տարիքը բարձր է 60-ից) վարկանշային ցուցակում, 1-ին հորիզոնականը զբաղեցնում է Շվեյցարիան (տե՛ս հավելված 11), այն դեպքում, երբ 2013 թ. 6-րդում էր, իսկ առաջատարն էր Շվեդիան, որն այժմ զբաղեցնում է 3-րդ հորիզոնակա-

¹ Կազմված է ըստ <http://www.e-cis.info> կայքէջի տվյալների:

² <http://www.worldbank.org>

³ <http://www.helppage.org>

նր: ՀՀ-ն զբաղեցրել է 43-րդ հորիզոնականը (Բուլղարիա՝ 49, Ղրղզստան՝ 51, Տաջիկստան՝ 58, Բելառուս՝ 64, Ռուսաստան՝ 65, Ուկրաինա՝ 73, Մոլդովա՝ 77), այն դեպքում, երբ 2013 թ. 51-րդն էր (Բուլղարիա՝ 47, Ղրղզստան՝ 63, Տաջիկստան՝ 52, Բելառուս՝ 60, Ռուսաստան՝ 78, Ուկրաինա՝ 66, Մոլդովա՝ 76):

Ինչպես երևում է, լավագույն կենսաթոշակային համակարգ ունեն այն երկրները, որոնք ներդրել են կուտակային բաղադրիչը: ԵՄ երկրներից կուտակային բաղադրիչ ներդրել են Դանիան, Էստոնիան, Լատվիան, Լեհաստանը, Լիտվան, Խորվաթիան, Հունգարիան, Շվեդիան և Ֆինլանդիան, իսկ մյուսները դեռևս չեն ներդրել (տե՛ս հավելված 12): ԱՊՀ երկրներից 6-ն արդեն անցել են կուտակային բաղադրիչին, իսկ մյուսները՝ Մոլդովան, Բելառուսը, Ադրբեջանը և Ուկրաինան՝ ոչ, նրանք դեռևս շարունակում են պահպանել բաշխողական համակարգը: ԱՊՀ երկրներից առաջինը Ղազախստանն էր, որը Չիլիի օրինակով, 1998 թ. անցել է պարտադիր կուտակային բաղադրիչին: ՌԴ-ում կուտակային բաղադրիչը ներդրվել է 2002 թ., Ուզբեկստանում՝ 2005 թ., Ղրղզստանում՝ 2010 թ., իսկ Տաջիկստանում առաջին կուտակային վճարը կատարվել է 2009 թ.: ՀՀ-ում պարտադիր կուտակային բաղադրիչը սկսել է գործել 2014 թվականից:

ԱՊՀ և ԵՄ երկրների կենսաթոշակային մոդելների ուսումնասիրությունները վկայում են, որ այս երկրները, անկախ իրենց աշխարհագրական դիրքից, զարգացածության աստիճանից, սեռատարիքային կազմից, բախվել են կենսաթոշակային համակարգի հիմնախնդիրներին, որոնցից կարևորագույնն են բնակչության ծերացումը, տարեցների կախվածության գործակցի կտրուկ աճը: Այդ իսկ պատճառով և՛ ԱՊՀ, և՛ ԵՄ երկրները փորձում են հիմնախնդիրները լուծել կենսաթոշակային տարիքի բարձրացման ճանապարհով, ինչը կարող է միայն ժամանակավոր լուծում համարվել: ՀՀ-ում 2011 թ. կանանց և տղամարդկանց կենսաթոշակային տարիքը սահմանվել է 63-ը, որը ներկայումս էլ անփոփոխ է: Մեր կարծիքով՝ ՀՀ-ում դասական բաշխողական համակարգի պահպանման դեպքում կենսաթոշակային տարիքի բարձրացումը կլիներ անխուսափելի, քանի որ կենսաթոշակային համակարգի ճեղքվածքի կարգավորումը հնարավոր էր կա՛մ կենսաթոշակային տարիքի, կա՛մ սոցիալական վճարների դրույքաչափերի բարձրացման հաշվին: ՀՀ-ում կենսաթոշակային տարիքն արդեն բարձր է, քանի որ տղամարդկանց կյանքի միջին սպասվող տևողությունը, ըստ 2016 թ. տվյալների, 71.6 տարի է, իսկ կանանցը՝ 78.3 տարի, ինչը նշանակում է, որ կենսաթոշակի անցնելուց հետո տղամարդիկ ապրում են 8.6 տարի, իսկ կանայք՝ 15.3:

ԱՊՀ և ԵՄ երկրների բնակչության սեռատարիքային կազմի համեմատությունը ցույց է տալիս, որ ԱՊՀ երկրները, ԵՄ երկրների համեմատ, առավել երիտասարդ են: ԱՊՀ երկրներում 65 տարեկանից բարձր բնակչությունը կազմում է ընդհանուր բնակչության 11%-ը, այն դեպքում, երբ ԵՄ-ում այն կազմում է 17%, իսկ 0-14 տարեկան բնակչությունը՝ ԱՊՀ երկրներում՝ 19%, ԵՄ երկրներում՝ ընդամենը 16%: Սեռատարիքային կազմով պայմանավորված՝ ԱՊՀ երկրներում բեռնվածության գործակիցն ամենաբարձրն է Ուզբեկստանում (4.3) և ամենացածրը՝ Ուկրաինայում (1.4), իսկ փոխհատուցման գործակիցը բարձր է Բելառուսում 0.42, ցածր՝ Հայաստանում 0.22: Ինչ վերաբերում է ԵՄ երկրներին, ապա այստեղ միջին կենսաթոշակի և միջին աշ-


խատավարձի բարձր հարաբերակցություն է առկա Նիդեռլանդներում 92.1% և 101.7% (և՛ ըստ բրուտո, և՛ ըստ նետո գործակիցների), իսկ ամենացածրը՝ Միացյալ Թագավորությունում՝ 33.6% և 41.2% (համապատասխանաբար և՛ ըստ բրուտո, և՛ ըստ նետո գործակիցների):

ՀՀ-ի համար կուտակային բաղադրիչի ներդրումը անխուսափելի էր: Համակարգի արդյունավետության և ոչ արդյունավետության մասին խոսելը դեռևս վաղ է, քանի որ դրանց վերաբերյալ որոշակի պատկերացում կարող ենք կազմել առնվազն 23 տարի հետո, երբ առաջին պարտադիր կուտակային բաղադրիչի մասնակից անձինք կսկսեն ստանալ իրենց կենսաթոշակները: Որպեսզի համակարգի նկատմամբ վստահությունը մեծանար և կուտակային բաղադրիչի ներդրման հետ կապված մեծ ցնցումներ չլինեին, կապված աղքատության մակարդակի հետ (30%), կարծում ենք՝ ավելի նպատակահարմար կլինեին բաղադրիչը ներդնել փոքր առ փոքր, շեմային, օրինակ՝ նախապես 2%, այնուհետև յուրաքանչյուր տարի 0.5%-ով բարձրացնել, այլ ոչ թե՛ 10% (աշխատող-5%, պետություն-5%):

Ըստ տարբեր ցուցանիշների (MMGPI և Global AgeWatch Index)՝ կենսաթոշակային մոդելների ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ աշխարհում լավագույն կենսաթոշակային համակարգեր ունեն եվրոպական երկրները, մասնավորապես՝ Դանիան, Նիդեռլանդները, Նորվեգիան, Շվեդիան, Շվեյցարիան, Ֆինլանդիան, ինչը և մեծավ մասամբ պայմանավորված է կուտակային բաղադրիչի առկայությամբ: Հետևաբար, համեմատության արդյունքում պարզ դարձավ, որ ԱՊՀ երկրների կենսաթոշակային համակարգերում առկա են թերություններ, ուստի և բարձր հորիզոնական չեն զբաղեցնում:

Հավելված 1

Տղամարդկանց և կանանց կենսաթոշակային փարիքը ԵՄ երկրներում 2009–2017 թթ.¹



¹ Կազմված է ըստ <https://tradingeconomics.com> կայքէջի տվյալների:


Հավելված 2

ԵՄ երկրների կենսաթոշակային փարիքը 2050 թ.¹



Հավելված 3

Կանանց և տղամարդկանց կենսաթոշակային փարիքը ԱՊՀ երկրներում, 2017 թ.²



¹ Կազմված է ըստ <https://www.etk.fi> կայքէջի տվյալների:
² Կազմված է ըստ ԱՊՀ երկրների վիճակագրական տարեգրքերի տվյալների:


Հավելված 4

ԱՊՀ անդամ պետություններում կենսաթոշակային իրավունքի սպասվող փոփոխությունները¹


Երկիր	Կենսաթոշակային իրավունքի սպասվող փոփոխությունները
Ադրբեջան	2017 թ. հուլիսի 1-ից կենսաթոշակային տարիքը յուրաքանչյուր տարի բարձրանում է 6 ամսով, և տղամարդկանց ու կանանց համար այն կհասնի մինչև 65 տարեկանը՝ համապատասխանաբար 2021 և 2027 թվականներին:
Բելառուս	2017 թ. հուլիսի 1-ից, նոր օրենսդրական փոփոխությունների արդյունքում, կենսաթոշակային տարիքը յուրաքանչյուր տարի բարձրանում է 6 ամսով և 2022 թ. տղամարդկանց համար կհասնի 63-ի, իսկ կանանց համար՝ 58-ի:
Ղազախստան	2018 թ. հուլիսի 1-ից կանանց կենսաթոշակային տարիքը յուրաքանչյուր տարի կբարձրանա 6 ամսով, մինչև կհասնի տղամարդկանց կենսաթոշակային տարիքին:
Ղրղզստան	Այստեղ տղամարդիկ կենսաթոշակ են ստանում 63 տարեկանում՝ 25 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում, իսկ կանայք 58-ում՝ 20 տարվա դեպքում:
Մոլդովա	2017 թվականից տղամարդկանց կենսաթոշակային տարիքը բարձրանում է 4, իսկ կանանցը՝ 6 ամսով: 2019 թվականից տղամարդկանց կենսաթոշակային տարիքը կլինի 63, իսկ 2028 թ. կանանց կենսաթոշակային տարիքը կհավասարվի տղամարդկանց կենսաթոշակային տարիքին: 2018 թ. կենսաթոշակի անցման համար տղամարդկանց աշխատանքային ստաժը 34 տարի է, իսկ կանանցը՝ 31, որը յուրաքանչյուր տարի կբարձրանա 6 ամսով և 2024 թ. կկազմի 34 տարի:
ՌԴ	2017 թ. նվազագույն աշխատանքային ստաժը կազմում էր 8 տարի, ինչը կբարձրանա և 15-ի կհասնի 2024 թ.: Տղամարդկանց կենսաթոշակային տարիքը նախատեսվում է 65-ի հասցնել 2030 թ., իսկ կանանցը՝ 63-ի՝ 2040 թ.:
Տաջիկստան	Նոր օրենքի համաձայն՝ տղամարդիկ 63-ում կենսաթոշակի անցնելու համար պետք է ունենան առնվազն 300 ամսվա ապահովագրություն, իսկ կանայք 58-ում անցնելու համար՝ 240 ամսվա:
Թուրքմենստան	62 տարեկան տղամարդիկ և 57 տարեկան կանայք օգտվում են կենսաթոշակ ստանալու իրավունքից, եթե ունեն առնվազն 5 տարվա ապահովագրական ստաժ:
Ուկրաինա	Կենսաթոշակային վճարման գործառույթը իրականացնում է կենսաթոշակային հիմնադրամը: Այստեղ տղամարդիկ պետք է ունենան առնվազն 15 տարվա ապահովագրական ստաժ՝ 60 տարեկանում կենսաթոշակի անցնելու համար, իսկ կանայք 240 ամսվա ապահովագրություն՝ 58-ում անցնելու համար, ինչը կբարձրանա և 2021 թ. կհավասարվի տղամարդկանց կենսաթոշակային տարիքին: Այնուամենայնիվ, կենսաթոշակային բարեփոխումները դեռևս չեն ավարտվել, և եթե 2018 թ. նոր օրենքն ընդունվի, ապա ապահովագրական ստաժը 2028 թ. 15 տարվանից կհասնի համապատասխանաբար 25-ի և 35-ի: Իրականում նախատեսվում է կենսաթոշակային տարիքը բարձրացնել, քանի դեռ անձը չունի ապահովագրական ստաժ (անձն ավելի երկար կաշխատի կենսաթոշակային իրավունք ձեռք բերելու համար): Ուկրաինայում պարտադիր կուտակային բաղադրիչի ներդրումը հետաձգվել է մինչև 2019 թ. հունվարի 1-ը:
Ուզբեկստան	Կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն 60 տարեկան, 25 տարվա աշխատանքային ստաժ ունեցող տղամարդիկ, իսկ կանայք՝ 55 տարեկանում 20 տարվա աշխատանքային ստաժի դեպքում:

¹ Կազմված է ըստ ԱՊՀ երկրների վիճակագրական տարեգրքերի տվյալների

Հավելված 5
«Խոշորագույն» կենսաթոշակային համակարգ ունեցող երկրների
կենսաթոշակային փարիքը 1960, 2015 թթ. և 2050 թ. կանխափեսմամբ¹




Հավելված 6
Կենսաթոշակային խնայողությունների ճեղքվածքի չափը 2015 թ. և 2050 թ.
կանխափեսմամբ (տրլն դոլար)²




¹ Կազմված է ըստ <http://www.weforum.org> կայքէջի տվյալների:
² Կազմված է ըստ <http://www.weforum.org> կայքէջի տվյալների:

Հավելված 7
ԱՊՀ անդամ երկրների բնակչության սեռափոփոխության կազմը, 2016 թ.¹




Հավելված 8
ԵՄ անդամ երկրների բնակչության սեռափոփոխության կազմը, 2016 թ.²



¹ Կազմված է ըստ <http://www.e-cis.info> կայքէջի տվյալների:

² Կազմված է ըստ <https://europa.eu> կայքէջի տվյալների:

Հավելված 9
Արդասահմանյան մի շարք երկրներում միջին կենսաթոշակի և միջին աշխատավարձի հարաբերակցությունը 2016 թ.¹



¹ Կազմված է ըստ <https://www.etk.fi> կայքէջի տվյալների:

Կենսաթոշակային համակարգերի դասակարգումն ըստ գնահատման ցուցանիշների (2015–2017 թթ.)

Երկիր	Ընդհանուր ցուցանիշ, 2015 թ.	Ենթացուցանիշներ 2015 թ.			Աստիճան	Ընդհանուր ցուցանիշ, 2016 թ.	Ենթացուցանիշներ 2016 թ.			Աստիճան	Ընդհանուր ցուցանիշ, 2017 թ.	Ենթացուցանիշներ 2017 թ.			Աստիճան
		Համարժեքություն 40%	Կայունություն 35%	Ամբողջականություն 25%			Համարժեքություն 40%	Կայունություն 35%	Ամբողջականություն 25%			Համարժեքություն 40%	Կայունություն 35%	Ամբողջականություն 25%	
Դանիա	81.7	77.2	84.7	84.5	A	80.5	75.8	85.3	81.4	A	78.9	76.5	79.8	81.3	B+
Նիդեռլանդներ	80.5	80.5	74.3	89.3		80.1	78.2	77.0	87.7		78.8	78.0	73.5	87.5	
Ավստրալիա	79.6	81.2	72.1	87.6	B+	77.9	76.0	74.1	86.1	B+	77.1	75.3	73.0	85.7	
Նորվեգիա					B					B	74.7	77.0	61.0	90.3	B
Ֆինլանդիա	73.0	70.7	61.8	92.4		72.9	70.6	62.2	91.5		72.3	70.2	61.3	91.0	
Շվեդիա	74.2	71.1	72.6	81.5	C+	71.4	67.6	69.5	80.3	B	72.0	67.7	71.0	80.3	
Սինգապուր	64.7	55.7	65.9	77.2		67.0	61.4	66.8	76.1		69.4	65.2	66.2	80.7	
Շվեյցարիա	74.2	73.9	68.4	82.9	B	68.6	60.5	67.4	83.5	B	67.6	60.2	64.7	83.3	
Նոր Զելանդիա											67.4	66.2	61.5	77.8	
Չիլի	69.1	62.8	65.0	84.8	B	66.4	56.5	68.4	79.6	B	67.3	58.0	69.1	79.7	C+
Կանադա	70.0	79.4	56.2	74.3		66.4	68.0	58.8	74.5		66.8	69.9	55.4	77.7	
Իռլանդիա	63.1	77.0	36.2	78.5	C+	62.0	76.2	34.8	77.3	C+	65.8	77.9	43.9	77.2	
Գերմանիա	62.0	76.0	36.8	75.0		59.0	70.4	35.8	73.1		63.5	76.5	40.9	74.0	C+
Կոլումբիա											61.7	66.4	49.9	70.7	
Մեծ Բրիտանիա	65.0	64.2	51.3	85.5	B	60.1	55.5	48.8	83.2	C+	61.4	58.2	49.4	83.5	C
Ֆրանսիա	57.4	77.2	36.6	54.9	C	56.4	75.2	35.2	55.8	C	59.6	80.4	38.6	55.8	
ԱՄՆ	56.3	55.1	54.4	61.1		56.4	53.5	57.1	59.9		57.8	57.0	57.1	60.1	
Մալայզիա						55.7	40.3	57.1	78.3		57.7	42.3	61.2	77.6	
Լեհաստան	56.2	61.8	40.6	69.0	C	54.4	57.9	41.2	67.3		55.1	58.1	43.1	67.1	
Բրազիլիա	53.2	64.6	24.5	75.1		55.1	67.9	29.2	70.7		54.8	67.8	29.2	70.0	
Ավստրիա	52.2	67.6	17.2	76.8		51.7	67.4	16.0	76.7		53.1	67.6	19.9	76.4	
Իտալիա	50.9	68.4	12.1	77.4		49.5	65.5	13.5	74.4	D	50.8	66.2	16.4	74.3	D
Ինդոնեզիա	48.2	41.3	40.1	70.8	D	48.3	41.0	43.0	67.3		49.9	40.1	49.3	66.4	
Հնդկ. Աֆրիկա	53.4	47.3	43.0	77.7	C	48.6	34.0	44.7	77.3		48.9	34.0	45.7	77.1	
Հնդկ. Կորեա	43.8	43.9	41.6	46.8	D	46.0	46.5	43.9	48.1		47.1	46.9	46.8	47.9	
Չինաստան	48.0	62.7	29.8	50.0		45.2	58.2	29.7	46.0		46.5	54.2	38.2	46.0	
Մեքսիկա	52.1	56.4	53.5	43.4	C	44.3	38.5	53.6	40.7		45.1	38.5	55.9	40.5	
Հնդկաստան	40.3	30.0	39.9	57.6	D	43.4	39.5	40.9	53.4		44.9	39.5	43.8	55.1	
Ճապոնիա	44.1	48.8	26.5	61.2		43.2	48.5	24.4	60.9		43.5	48.0	26.0	60.7	
Արգենտինա						37.7	42.3	30.1	40.9		38.8	42.4	33.1	41.2	
Միջինը	60.5	63.8	48.2	72.6		58.1	59.0	48.5	70.1		59.9	60.9	50.8	71.2	

Կենսաթոշակային համակարգերի դասակարգում, Global Age Watch Index, 2015 թ.¹

1. Շվեյցարիա	18. Իսրայել	35. Լատվիա	52. Չինաստան	68. Մոնթենեգրո	85. Հորդանան
2. Նորվեգիա	19. Լյուքսեմբուրգ	36. Կոլումբիա	53. Ալբանիա	69. Պարագվայ	86. Նիգերիա
3. Շվեդիա	20. Պանամա	37. Իտալիա	54. Սալվադոր	70. Նեպալ	87. Իրաք
4. Գերմանիա	21. Չիլի	38. Պորտուգալիա	55. Բոլիվիա	71. Հնդկաստան	88. Ուզանդա
5. Կանադա	22. Չեխիա	39. Հունգարիա	56. Բրազիլիա	72. Մոնղոլիա	89. Ռուանդա
6. Նիդեռլանդներ	23. Էստոնիա	40. Սլովակիա	57. Նիկարագուա	73. Ուկրաինա	90. Ջամբիա
7. Իսլանդիա	24. Բելգիա	41. Վիետնամ	58. Տաջիկստան	74. Ինդոնեզիա	91. Տանզանիա
8. Ճապոնիա	25. Իսպանիա	42. Մավրիկիոս	59. Գվատեմալա	75. Թուրքիա	92. Պակիստան
9. ԱՄՆ	26. Սլովենիա	43. Հայաստան	60. Հրվ. Կորեա	76. Վենեսուելա	93. Արմ. ափ և Գազա
10. Անգլիա	27. Ուրուգվայ	44. Էկվադոր	61. Խորվաթիա	77. Մոլդովա	94. Մոզամբիկ
11. Դանիա	28. Կոստա Ռիկա	45. Ռումինիա	62. Դոմինիկյան Հանրապետություն	78. Հրվ. Աֆրիկա	95. Մալավի
12. Նոր Զելանդիա	29. Վրաստան	46. Շրի Լանկա	63. Լիբվա	79. Հունաստան	96. Աֆղանստան
13. Ավստրիա	30. Կիպրոս	47. Մալթա	64. Բելառուս	80. Կամբոջա	
14. Ֆինլանդիա	31. Արգենտինա	48. Պերու	65. Ռուսաստան	81. Գանա	
15. Իռլանդիա	32. Լեհաստան	49. Բուլղարիա	66. Սերբիա	82. Հոնդուրաս	
16. Ֆրանսիա	33. Մեքսիկա	50. Ֆիլիպիններ	67. Բանգլադեշ	83. Լատու	
17. Ավստրալիա	34. Թաիլանդ	51. Ղրղզստան		84. Մարոկկո	

¹ Կազմված է ըստ <http://www.helppage.org> կայքէջի տվյալների:

ԵՄ երկրների դասակարգումն ըստ կուրակային բաղադրիչի առկայության¹

Երկիր	Կուրակային բաղադրիչն առկա չէ	Կուրակային բաղադրիչն առկա է
Ավստրիա	+	
Բելգիա	+	
Բուլղարիա		+
Գերմանիա	+	
Դանիա		+
Էստոնիա		+
Իռլանդիա	+	
Իսլանդիա	+	
Իսպանիա	+	
Իտալիա	+	
Լատվիա		+
Լեհաստան		+
Լիտվա		+
Լյուքսեմբուրգ	+	
Խորվաթիա		+
Հունաստան	+	
Հունգարիա		+
Միացյալ Թագավորություն	+	
Շվեդիա		+
Չեխիա	+	
Պորտուգալիա	+	
Սլովակիա	+	
Ֆինլանդիա		+
Ֆրանսիա	+	

АНИ ДАВТЯН**ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПЕНСИОННОЙ СИСТЕМЫ В СТРАНАХ СНГ**

Ключевые слова: пенсионная система, пенсионное реформирование, пенсионный возраст, коэффициент загрузки, коэффициент возмещения.

В статье рассмотрены особенности пенсионной реформы в странах ЕС и СНГ, проблемы пенсионной системы в странах ЕС и СНГ, были изучены половой и возрастной состав в странах ЕС и СНГ, были представлены коэффициенты нагрузки и компенсации в странах СНГ и соотношение средней пенсии и средней заработной платы в европейских странах, были проанализированы MMGPI и Global AgeWatch Index, и в результате, были сделаны выводы и были представлены рекомендации.

ANI DAVTYAN**WAYS OF IMPROVING THE PENSION SYSTEM IN THE CIS COUNTRIES**

Key words: pension system, pension reform, retirement age, load factor, coefficient of reimbursement.

The article examines the peculiarities of pension reform in the EU and the CIS countries, the problems of the pension system in the EU and CIS countries, studied the sex

¹ Հաղմված է ըստ <https://openknowledge.worldbank.org>-ի տվյալների:

and age composition in the EU and CIS countries, presents the load and compensation coefficients in the CIS countries and the ratio of average pension and average wages in European countries, the MMGPI and the Global AgeWatch Index were analyzed, and as a result of which, conclusions have been made and recommendations have been presented.

ՄԱՆԵ ԵԳԱՆՅԱՆ

Բանկային գործ, բակալավրիատ,
4-րդ կուրս

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԱՐԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. իրավաբանական անձ, ՀՀ բանկային համակարգ, վարկունակության գնահատման կառուցակարգեր

Ամփոփելով իրավաբանական անձանց վարկունակության գնահատման առկա կառուցակարգերը՝ կարծում ենք, որ արդի պայմաններում ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, նախքան վարկի տրամադրումը, կատարում են բավականին խորը և համակողմանի վերլուծություն: Այնուամենայնիվ, մոտ ապագայում հնարավոր է հասնել այդ կառուցակարգերի կատարելագործմանը, ինչի միջոցով բանկի վարկային պորտֆելում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը կհասնի նվազագույնի:

Իրավաբանական անձինք սեփական կապիտալի շահութաբերությունն ավելացնելու նպատակով իրենց գործունեությունն իրականացնում են՝ օգտագործելով նաև փոխառու միջոցներ (հիմնականում բանկային վարկերի տեսքով): Առևտրային բանկերը, նախքան վարկերի տրամադրումը, վերլուծություն են կատարում՝ տվյալ վարկի տրամադրման նպատակահարմարությունը բացահայտելու համար:

Իրավաբանական անձանց վարկունակության գնահատումը ՀՀ առևտրային բանկերն իրականացնում են՝ կիրառելով գրեթե նույն կառուցակարգերը. բիզնեսի վերլուծություն, համակողմանի ուսումնասիրություն կազմակերպության ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ, և վերջիններիս համադրման արդյունքում հաճախորդի վարկունակության վերջնական գնահատում:

Վարկունակության գնահատման հիմնական սկզբունքներն են.

- ֆինանսական վիճակի վերլուծության համար կարող է հիմք հանդիսանալ միայն պատշաճ հիմնավորված և ուսումնասիրված տեղեկատվությունը,
- ֆինանսական վիճակի վերլուծությունը կատարվում է տվյալ պահի և նախորդ ժամանակաշրջանի տվյալների ուսումնասիրության հիման վրա, ինչը հնարավորություն է տալիս գնահատելու ֆինանսական վիճակի փոփոխությունները ժամանակի մեջ (անցյալում) և կանխատեսումներ կատարել:

Վարկառուի վարկունակության գնահատման հիմնական ֆինանսական ցուցանիշներն են.